

ՌԱՖԱՅԵԼ ԼԵՄԿԻՆԸ ԵՎ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՍԹԻՎԵՆ Լ. ՋԵԿՈԲՍ

Ներածություն

Փաստ է, որ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում երիտթուրքական վարչակարգի կազմակերպած հայերի ցեղասպանությունը նախապատրաստեց Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Թուրքիայի գերմանացի գործընկերների և աջակիցների կողմից իրականացված՝ հրեաների կոտորածը: Ավելի քիչ է հայտնի այն փաստը, որ ցեղասպանություն երևույթն իր հետքն է թողել նաև եզակի մի անհատի՝ ԱՄՆ-ում ապաստան գտած լեհական ծագումով հրեայի վրա: Քիչ է հայտնի նաև այն իրողությունը, որ Հայոց ցեղասպանությունը՝ ցեղասպանության այլ օրինակների հետ միասին, ուժ և նպատակայնություն է հաղորդել այդ անձին՝ իր կայացման և մասնագիտական գործունեության տարիներին: Այդ մասին, թերևս, գիտեն միայն նրա գործի հետ առնչվող մի շարք գիտնականներ և պատմաբաններ: Այնուամենայնիվ, Ռաֆայել Լեմկինի մահից կես դար անց հետգիտն տարբեր առիթներով շարադրվում և վերաշարադրվում է նրա կյանքի պատմությունը, իսկ նրա՝ առաջամարտիկի գործն ու հայացքներն արագորեն զնահատանքի են արժանանում: Դրա պատճառն այն է, որ նրա անունը և ցեղասպանություն երևույթին նվիրված մեծածավալ աշխատություններն իրենց ուղին են հարթում դեպի հասարակական ասպարեզ:

Ո՞վ էր Ռաֆայել Լեմկինը և ինչու՞ ցեղասպանություն

Ռաֆայել Լեմկինը ծնվել է 1900թ. լեհական Բեզկոդեհն քաղաքում՝ հրեա ֆերմերի ընտանիքում: Դեռևս անտիպ ինքնակենսագրությունում, որը վերնագրված է «Ոչ պաշտոնական մարդ. Ռաֆայել Լեմկինի ինքնակենսագրությունը», Լեմկինը ներկայացնում է հրեական և ոչ հրեական կյանքի կենտրոններից և պետական պաշտոնյաներից հեռու գտնվող իր միջավայրում լեհերի «հանդուրժող» վերաբերմունքը հարևան հրեաների նկատմամբ: Հետադարձ հայացքով հեղինակն իր մանկությունը և պատանեկությունը համեմատում է 20-րդ դարի առաջին տասնամյակների նմանատիպ միջավայրերում ապրող մյուս հրեաների կյանքի հետ և համարում դրանք ոչ անսովոր, ոչ էլ խիստ տարբեր՝ միայն մի նշանա-

կալի վերապահությամբ: Պատանեկության տարիներին (չի նշում կոնկրետ երբ) Ռաֆայելը կարդում և խորապես ազդվում է 1905 թ. Նոբելյան մրցանակի արժանացած լեհ հեղինակ Հենրիկ Սենկևիչի «Յո՞ երբաս» վեպից, որը պատմում էր, թե ինչպես է Ներոնին հաջողվում ոչնչացնել իր տիրույթում գտնվող գրեթե բոլոր քրիստոնյաներին: Նա գրում է.

«Ես հարցրեցի իմ մայրիկին. «Մինչև առյուծների առջև նետվելը չէի՞ն կարող քրիստոնյաները ռատիկանություն զանգահարել»: Նա ինձ պատասխանեց. «Կարծում ես՝ ռատիկանությունը կարո՞ղ էր օգնել նրանց»:

Ես սկսեցի կարդալ ազգային, կրոնական և ռասայական խմբերին ոչնչացնելու այլ փորձերի մասին: Ընտռով հասկացա, որ տեղական ռատիկանությունից էլ ավելի գորեղ մի ուժ է հարկավոր կանգնեցնելու այն չարիքը, որին ես հետո «ցեղասպանություն» անունը տվեցի: Իմ ուշադրությունը կենտրոնացավ պատմության ընթացքում տեղի ունեցած ցեղասպանության դեպքերի վրա: Երևակայությունս այնքան վառ էր, որ ես կարծես տեսնում էի իրադարձությունները սեփական աչքերով: Իմ առջև էր Ֆրանսիայի թագավոր Չարլզ XII-ը, որն արքայական դղյակի իր պատշգամբից վայելում էր հուզենոտների սպանդի տեսարանը և տանջահարների դեմքերն ավելի լավ տեսնելու համար հրամայում էր նոր ջահեր վառել: Ինձ էին ներկայանում XVII դարի Ճապոնիայի կաթոլիկները, որոնց ստիպում էին ջուր խմել, հետո, ամուր փակելով նրանց մարմինների բոլոր ելանքերը, պառկեցնում էին մեծ ծանրությունների տակ՝ մինչև մկանների պայթելը: Ես տեսնում էի Իսպանիայի մահմեդականներին: Նրանք աֆրիկյան սպանիչ արևի տակ կիսամերկ խռոված էին նավի տախտակամածի վրա և նավաստիներից փորձում էին ստվերի տակ նստելու թույլտվություն գնել: Դրանով այս թշվառները մի փաթիլ էլ կույկարսձգեին իրենց խոճուկ գոլությունը, ինչից հետո մրանց դիակները կնետվեին ծովի ջրերի մեջ: Վերջապես իմ ականջին ճիշեր էին հասնում հրեական պառզոմներից, որոնց ժամանակ թափելով մարդկանց փորձուտիքը, փոխարենը փետուր էին լցնում ու կարում:

Ես շարունակում էի ուսումնասիրել պատմությունը և հետզհետե ավելի շատ էի առնչվում թվապես աճող զոհերի տառապանքներին: Ես հասկացա, որ հիշողության գործառնություն ոչ միայն անցած դեպքերի գրանցումն է, այլ նաև մարդկային խղճի խթանումը: Ընտռով հետևեցին ցեղասպանության ժամանակակից օրինակները, ինչպես՝ հայերի կոտորածը: Ինձ համար պարզ դարձավ, որ ազգերի, կրոնական խմբերի և ռասաների բազմազանությունը կարևոր է քաղաքակրթության համար, քանի որ նրանցից յուրաքանչյուրը որոշակի առաքելություն և մշակութային ներդրում ունի կատարելու: Ոչնչացնել այդ խմբերին, նշանակում է հակառակվել Արարչի կամքին և խախտել մարդկության հոգևոր ներդաշնակությունը: Ես որոշել էի իրավաբան դառնալ և աշխատել պետությունների համագործակցության միջոցով կանխել և մարդկային հասարակության միջից արմատախիլ անել ցեղասպանություն երևույթը: Այդ պետությունները պետք է ստիպված լինեն հասկանալ, որ հարձակումն այդ խմբերից որևէ մեկի վրա հարձակում է բոլորի վրա: Իմ հասուն կյանքի տարիները ես նվիրեցի այս աշխատանքին».²

Լեմկինը շարունակեց իր ուսումնական իրավագիտության բնագավառում նախ Լեհաստանում՝ Լվովի (այն հայտնի էր նաև Լեմբերգ, Լվիվ անուններ

րով), ապա Գերմանիայում՝ Հայդելբերգի համալսարաններում: Դրանից հետո, 1927թ. նա դառնում է Վարշավայի վերաքննիչ դատարանի քարտուղար: 1929-ից մինչև 1935 թվականները Լեմկինը աշխատում է որպես Լեհաստանի հանրապետության օրենքները համակարգող հանձնաժողովի քարտուղար իսկ հետո՝ մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը, զբաղվում է մասնավոր իրավաբանությամբ: 1933 թ. Լեմկինը պատրաստվում էր մասնակցել Մադրիդում անցկացվող Ազգերի լիգայի ժողովին, ուր զանգվածային կոտորածներն ու մշակույթների ոչնչացումը կանխելու վերաբերյալ (նա օգտագործում էր «բարբարոսություն» և «վանդալիզմ» եզրերը) օրինագծեր պետք է առաջարկել, սակայն ամենավերջին պահին Ռաֆայելին Մադրիդ մեկնելուց հետ պահեցին նրա դեկավարները: Նա իր զբաղվող նյութերն ուղարկել էր մինչև ժողովի սկսվելը, սակայն նրա առաջարկների ամենաջողությամբ աշդեն իսկ կանխադրված էր, քանզի Ազգերի լիգան պատրաստ չէր դրան:

Դեռ Լվովում ուսանող եղած ժամանակ Լեմկինը մեծ հետաքրքրությամբ հետևեց մեկ այլ ուսանողի՝ Սողոմոն Թեկերյանի դատավարությանը, որը 1921թ. Բեռլինի փողոցներից մեկում սպանեց Հայոց ցեղասպանության գլխավոր հանցագործին՝ Թալես փաշային: Իր ինքնակենսագրությունում Լեմկինը հիասթափություն և մտահոգություն է արտահայտում այն առթիվ, որ Հայոց ցեղասպանության կազմակերպիչները չպատժվեցին դաշնակից պետությունների կողմից:

«Թուրքիայում սովելի քան 1 միլիոն 200 հազար հայեր ոչնչացվեցին միայն այն բանի համար, որ քրիստոնյաներ էին: Նրանք դուրս էին բերվում իրենց տներից և քշվում Եփրատ գետի երկայնքով: Հետո, հանկարծ, նրանց ուղեկցող ժանդարմները, կրակ արձակելով քարավանի երկու ծայրերում, նրանց՝ հայերին էին մեղադրում կրակոցների համար և հետո՝ բոլորին կոտորում:

Պատերազմի ավարտից հետո շուրջ 150 թուրք պատերազմի հանցագործներ ձերբակալվել և քրիստոնական կառավարության կողմից ներկայվել էին Մալթա կղզում: Հայերը պատվիրակություն ուղարկեցին Վերսալի խաղաղության կոնֆերանսին: Նրանք արդարություն էին պահանջում: Հետո, մի օր պատվիրակության անդամները թերթերում կարդացին, որ բոլոր թուրք պատերազմական հանցագործներն ազատ են արձակվել: Ես ցնցված էի: Մի ազգ էր ոչնչացվել, իսկ մեղավոր ամենիք ազատ էին արձակվել: Ինչու՞ են պատժում մարդուն, երբ վերջինս մեկ այլ մարդ է սպանում: Ինչու՞ է մեկ միլիոնի բնաջնջումն ավելի նվազ հանցանք, քան մեկ անհատի սպանությունը: Մալթայից ազատ արձակված թուրք հանցագործները ցրվեցին ողջ աշխարհով մեկ: Նրանցից ամենասարսափելին Թալես փաշան էր՝ Թուրքիայի ներքին գործերի նախարարը, որի անունը նույնացվում էր հայ ժողովրդի ոչնչացման հետ: Թալես փաշան ապաստան գտավ Բեռլինում: Մեկ օր նրան փողոցում կանգնեցրեց մի հայ երիտասարդ՝ Թեկիրան [Թեկիրյան] անունով: Համոզվելով, որ նա Թալեսն է՝ Թեկիրանը գնդակահարեց նրան՝ ասելով հետևյալ խոսքերը. «Մա իմ մայրիկի համար»: Թեկիրանը կոտորածների ժամանակ մազապուրծ եղած մարդկանցից մեկն էր: Նա փրկվել էր այն պատճառով, որ մնացել էր մահացած մոր մարմնի տակ, և դաժնիքները չէին նկատել նրան: Թեկիրանին դատեցին: Փաստորեն նրա դատավարությունը վերածվեց թուրք հանցագործների դատավարության: Հայերի կողմից դատարան բերված բազ-

մաթիվ վկաներ նկարագրեցին կոտորածների չարաղետ տեսարանները: Այս դատավարության միջոցով աշխարհը վերջապես տեսավ Թուրքիայում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների իրական պատկերը: Այդ նույն աշխարհը, որը 1200000 հայերի ոչնչացման ժամանակ շահադիտորեն լռում էր, ցանկացավ նաև կոծել այդ իրողությունը՝ պատերազմից հետո ազատ արձակելով 150 թուրք պատերազմական հանցագործներին: Սակայն աշխարհը Բեռլինում արձակված ճակատագրական կրակոցից հետո ստիպված էր ականջալուր լինել իրողությանը:

Բեռլինի դատարանն արդարացրեց Թեհլիրյանին: Այն որոշեց, որ Թեհլիրյանը գործել է հոգեբանական հարկադրանքի ներքո (psychological compulsion): Այն անձը, որը կրակոցով փորձել էր բարձրացնել մարդկության բարոյական պատիվը, դասակարգվեց որպես իր արարքի բարոյական բնույթը գիտակցելու անկարող այսպես կոչված խելագար ամբաստանյալ: Թեհլիրյանը, որպես օրենքի ինքնանշանակ սպա, գործում էր հանուն մարդկության խղճի: Բայց կարո՞ղ է մարդն ինքն իրեն արդարություն բաշխողի դերում նշանակել: Արդյո՞ք կիրքը չի գերակշռի նման դատատանի հիմքում՝ վերածելով այն արդարադատության ծաղրանքի: Այդ ժամանակ անմեղ մարդկանց ապանությունն փոխարինելով մոտեցություններս ավելի իմաստալի դարձան ինձ համար: Ես չգիտեի բոլոր պատասխանները, բայց զգում էի, որ սպանության այս տեսակի դեմ աշխարհն ինչ-որ օրենք պիտի ընդունի:

Այս խնդիրը ես քննարկում էի իմ պրոֆեսորների հետ Լվովի համալսարանում, ուր ընդունվել էի իրավագիտություն ուսանելու համար: Նրանք վկայակոչում էին պետությունների սուվերենության փաստարկը: «Բայց պետությունների սուվերենությունը, - պատասխանում էի ես, - նշանակում է ինքնուրույն ներքին և արտաքին քաղաքականություն, դպրոցների կառուցում, ճանապարհների շինարարություն, կարճ ասած՝ ցանկացած այնպիսի գործունեություն, որն ուղղված է մարդկանց բարօրությանը: Սուվերենությունը, - ասում էի ես, - չի կարող ընդունվել որպես միլիտանտոր անմեղ մարդկանց սպանելու իրավունք»:

Երկրորդ համաշխարհային պատերազմի նկզբին, որը նշանավորվեց գերմանացիների կողմից 1939թ. սեպտեմբերի 1-ին Լեհաստանի գրավմամբ և մի քանի շաբաթների կարճ ժամանակահատվածում կայծակնային հաղթանակներով, Լեմկինը միացավ լեհական դիմադրությանը: Այնուամենայնիվ, մեկ տարուց մի փոքր ավելի ժամանակ անց նա պետք է թողներ իր հայրենի Լեհաստանը և Շվեդիայի ու Շվեյցարիայի միջով 1941թ. ժամաներ Միացյալ Նահանգներ, ուր սկսեց իրավունք դասավանդել Դյուկի և Յելի համալսարաններում: Պատերազմի ավարտից հետո, նա հանդես եկավ որպես Ռոբերտ Հ. Ջեքսոնի խորհրդական՝ մասնակցելով Գերմանիայում ընթացող Նյուրնբերգի ռազմական տրիբունալի աշխատանքներին:³ Մինչև այս նշանակումը՝ 1944թ., Լեմկինը հրատարակեց իր գլխավոր աշխատանքը՝ «Առանցքի պետությունների իշխանությունն օկուպացված Եվրոպայում. օկուպացիայի օրենքներ, կառավարման վերլուծություն, փոխհատուցման առաջարկներ» վերնագրով:⁴

Կարևոր է նշել, որ գրքի առաջին մասի IX գլուխը՝ 79-95 էջեր, վերնագրված է «Ցեղասպանություն», այն ունի երեք ենթագլուխ:

1. Ցեղասպանություն՝ ազգերին ոչնչացնելու նոր տերմին և նոր հայեցակարգ

2. Յեղասպանության տեխնիկան տարբեր ոլորտներում՝ քաղաքական, սոցիալական, մշակութային, տնտեսական, կենսաբանական, ֆիզիկական, կրոնական և բարոյական

3. Խորհուրդներ ապագայի համար. Յեղասպանության արգելումը պատերազմի և խաղաղության ընթացքում. օկուպացիայի քաղաքականության միջազգային վերահսկողություն:

Լեմկինն իր գրքում առատորեն օգտագործում էր «ցեղասպանություն» տերմինը, և այս սարսափելի հանցանքի պատճառները չհոգսացնելու և հետևանքները մեղմելու ի սկզբանե եկող նրա նվիրումը շարունակում էր աննկուն մնալ: Միաժամանակ նա լեզվագիտական առումով նախապատրաստվեց ընդունել մեկ այլ բառ-տարբերակ՝ «էթնոցիդը», որը նույնպես պիտի սահմաներ իր մտահղացումը:

*«Նույն գաղափարի համար կարող էր օգտագործվել մեկ այլ տերմին՝ էթնոցիդ, որը բաղկացած էր հունարեն «էթնոս»՝ ազգ և լատիներեն «ցիդ»՝ արմատներից»:*⁵

Նյուրնբերգյան դատավարությունների ավարտից հետո վերադառնալով Միացյալ Նահանգներ՝ Լեմկինը հաջորդ երեք տարիների ընթացքում հետևողականորեն ջանում էր, որպեսզի Ազգերի լիգային հաջորդած Միացյալ ազգերի կազմակերպությունը ցեղասպանությունը դատապարտող և արգելող բանաձև ընդունի: Նրա աշխատանքը հաջողությամբ պսակվեց 1948թ. դեկտեմբերին, երբ Միացյալ ազգերի կազմակերպությունը Գլխավոր ասամբլեայի այն ժամանակվա նախագահ, ավստրալացի Հերբերտ Վ. Էվատտի ղեկավարությամբ ընդունեց «Յեղասպանության հանցանքի կանխարգելման և դրա համար պատժի» կոմպենցիան: Իր կյանքի վերջին տաս տարիների ընթացքում՝ մինչև 1959թ., Լեմկինն իր վիթխարի էներգիան ներդրեց երկու հիմնական ոլորտներում:

1. Հնարավորի սահմաններում արեց ամեն ինչ և փորձեց միավորել բոլոր ուժերին, որպեսզի իր երկրորդ հայրենիքը՝ սիրելի Միացյալ Նահանգները հաստատեն ցեղասպանության կոմպենցիան.

2. Գրեց ցեղասպանության վերաբերյալ մի շարք կարևոր գրքեր, որոնք բոլորն էլ՝ հետաքրքրության կամ համապատասխան շուկայի բացակայության պատճառաբանություններով, չհրատարակվեցին:⁷

Ճեռագիր N 1. Հայկական կոտորածների վերաբերյալ գրքաչափ (book-length) ձեռագիր

Լեմկինին պատկանող շուրջ 20000 էջ մամուլագրության, հոդվածների, հարցազրույցների, լրագրային քաղվածքների, խմբագրականների և ձեռագրերի մեջ կարելի է գտնել երկու նյութ, որոնք առնչվում են մեր հոդվածի խնդրո առարկա թեմային: Դրանցից մեկը 139 էջանոց անվերնագիր մի ձեռագիր է, որին Լեմկինի այս ժառանգության համար գրացուցակ կազմող անձը տվել է «Հայկական կոտորածների վերաբերյալ գրքաչափ ձեռագիր» անվանումը: Երկրորդը վեց էջանոց նույնպես անվերնագիր ձեռագիր է, որն անվանվել է «Հայկական կոտորածների վերաբերյալ համառոտ ձեռագիր», ընդ որում երկու ձեռագրերից և ոչ մեկը թվագրված չէ: Դրանցից առաջինը, որն իր գրականության ցանկում 22 աղբյուրներ է պարունակում, բաժանված է հետևյալ 7 ենթաբաժինների, 1. Հայերը. ընդհանուր պատկեր, 2. Հարկում [բնագավառ, որի մեջ առանձնապես հետաքրքրված էր Լեմկինը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հեղինակն

իր «Առանցքի տերությունների իշխանությունն օկուպացված Եվրոպայում» աշխատության շատ մասերում կենտրոնացած է իրավական խնդիրների վրա, 3. 1890-ականների կոտորածները, 4. 1909թ. Ադանայի կոտորածները, 5. 1915-1916թթ. կոտորածները և տեղահանությունները, 6. Սպանելու մտադրությունը, ո՞վ է մեղավոր, 7. Արձագանքներն արտասահմանում:

Այս ենթավերնագրերը Լեմկինին են: «Համառոտ ձեռագիրը», մյուս կողմից, գրականության ցանկ չունի, բայց տողատակերում հինգ աղբյուրներից հղումներ կան: Իր օգտագործած բոլոր աղբյուրներից առատ մեջբերումներ անելով և միահյուսելով դրանք մեկ կապակցված ձեռագրի մեջ՝ Լեմկինը չէր վախենում իր ապագա ընթերցողներին ներկայացնել անգամ ամենասարսափելի պատկերներով տեսարանները: Դրանցից մեկը, օրինակ, վերցված էր Ֆրեդերիկ Դեմիս Գրինի 1895թ. տպագրված «Հայկական ճգնաժամը Թուրքիայում» գրքից.

«Հետևյալ նամակի խսկությունը երաշխավորվում է քսան նշանավոր ամերիկացիների կողմից, բայց դրա տպագրության ժամանակ ոչ հեղինակի, ոչ էլ այն վայրի անունը, որտեղից գրվել է նամակը, չէին կարող նշվել թուրքական բռնությունների մտավախությունից եղևելով:

Նոյեմբեր 16, 1894թ.

Մի շարք հասուն տարիքի հայեր ձերբակալվեցին, կապկալվեցին, ծածկվեցին չոր մացառներով և ողջ-ողջ այրվեցին: Մի շարք հայեր, որոնց թիվը հաստատ չէ, բայց և չի գերազանցում հարյուրը, անձնատուր եղան և զթասրտությամբ հայցեցին: Նրանցից շատերը գնդակահարվեցին տեղում, մնացածներին կոտորեցին սրերով և սվիններով:

Մոտավորապես 60-ից 160 կանանց լառել էին հիկոհոցում և նրանց մեջ «սգատ արձակել» գեղվաբնակից: Նրանցից շատերը դաժան կոպտի գոհ էին դարձել, իսկ մնացածները՝ սպանվել էին սրերով և սվիններով: Երկու բան են պատմում: 1. Այն, որ նրանց բռնի տարել են իրենց գերդների հարեմները: 2. Այն, որ նրանց առաջարկվել է իսլամ ընդունել և մտնել հարեմները, բայց մերժելով, կոտորվել են: Երեխաներին մեկը մյուսի ետևից կանգնեցնում էին մի շարքում և առջևում կանգնածի վրա կրակելով տեսնում, թե գնդակը քանի հոգու կսպանի: Մանկահասակ երեխաներին պառկեցնում էին միմյանց վրա և մեկ հարվածով կտրում նրանց գլուխները: Ձինվորները շրջապատում էին հայերի տները, հրդեհում դրանք, իսկ տնից դուրս փախչել փորձողներին հրացանի սվիններով հետ էին գցում կրակի բոցերի մեջ»:¹⁰

Ամենայն հավանականությամբ այս ձեռագիրը գրվել է ՄԱԿ-ի կողմից Ցեղասպանության կոմիտեի հայի ընդունումից հետո (1948), քանի որ 1945-ից մինչև 1948թ. նա անմնացորդ կենտրոնացած էր հրեաների հանդեպ նացիստների կատարած ջարդերի վրա, որոնց վերաբերյալ մանրամասնություններն ի հայտ եկան հենց այդ ժամանակ: Ամենայն է սահմանել նաև՝ արդյո՞ք ձեռագիրը գրվել է 1950-1953թթ. Կորեական պատերազմից առաջ, թե պատերազմին հաջորդած էյֆորիայի (euphoric aftermath) ընթացքում, երբ Միացյալ Նահանգներն անմախաղեպ տնտեսական աճ էր ապրում և «սառը պատերազմը» Խորհրդային միության հետ գերակշռող էր դարձել քաղաքական մտքի և իրականության մեջ: Քանի որ հրատարակիչները 1950-ականների կեսերին մերժել էին ամերիկյան հասարակայնու-

թյան առջև ցեղասպանության վերաբերյալ իր մտահոգությունները արծարծելու մյուս փորձերը, կարելի է ենթադրել, որ այս ձեռագիրը գրվել է մոտավորապես նույն ժամանակաշրջանում:

Ամենագարմանալին և գուցե ամենացնցողն այն է, որ առանց նվագեցնելու իր համար հարազատ դարձած Հայոց ցեղասպանության թեմայի սարսափները, և իմանալով նացիստների ձեռքով իր ընտանիքի 49 անդամների սպանության իրողությունը, Լեմկինը ձեռագրի վերջին մասին հաջորդող հատվածում՝ «Մայանելու մտադրություն. ո՞վ է մեղավոր» վերնագրով, ամոռաբար և զայրալից քննադատության է ենթարկում թուրքերին և գերմանացիներին: Նա խիստ պախարակման է ենթարկում նույնիսկ Ղուրանը, և դա արվում է մի մարդու կողմից, որը քաղաքականապես բավականին հասունություն և խորաթափանցություն ուներ ոչ միայն Արևմուտքի, այլև կոմունիստների ազդեցության տակ գտնվող Արևելքի և մահմեդական երկրների աջակցության հնարավորությունը օգտագործելու համար: Կարելի է միայն կարծել, որ իրավաբանի կրթությունը, գիտական օբյեկտիվությունը և այն հանգամանքը, որ իր հետազոտության ժամանակ Լեմկինը հետզհետե առնչակից էր դառնում պատմության ընթացքում տեղ գտած ցեղասպանությունների խմբային սարսափներին, իրավունք էին տալիս Լեմկինին ստանձնել շրջանառության մեջ եղած համոզիչ փաստերի դասակարգումը և իր մեկնաբանությունների հետ միասին ներկայացնել նրանց, ով կիսում էր հեղինակին հուզող մտահոգությունները: Նաև հնարավոր է, որ Միացյալ ազգերի կազմակերպությունում ունեցած հաջողություններից հետո էր, որ նա մեկ այլ հնարավորություն տեսավ ցեղասպանության կանխման գործում Միացյալ ճանապարհների անմիջական աջակցությունը ստանալու համար, այն է՝ ցանկացավ սովորեցնել իր աշխատությունների և անցյալ ու ներկա ցեղասպանությունների մասին կրթություն տալու միջոցով: Մակայն, ցավոք, սրանք միայն խորհրդածություններ են ինքը՝ Լեմկինը, այս մասնավոր ձեռագրի հետևում ռազմականության ոչ մի հետք չի թողնում, ոչ էլ որևէ նշան դատապարտման, որ այդ ձեռագիրը պարունակում էր:

Լեմկինը, ինքը լինելով Հուլոքոստից փրկված հրեա փախստական, սկսում է այս հատվածը հետևյալ հայտարարությամբ.

«Մահմեդական կրոնի սրտում որպես ամուր քրիստոնեական տարր հանդիսացող հայերի ոչնչացումը անխուսափելի էր, քանի որ Ղուրանի հիմնարար սկզբունքները հակադրության մեջ էին Զրիստոսի ուսմունքի հետ»¹¹

Երկու էջ հետո նա շարունակում է.

«Այն մի մահմեդական կառավարիչ, մահմեդական կրոնի ոչ մի հետևորդ չէր կարող Ղուրանի ուսմունքին հակառակ գնալ, այդ պատճառով իսկ, սուլթանների կողմից օտար պետությունների ճնշման տակ տրվող շնորհները, արտոնագրերը, ռեֆորմները, կրոնի ազատության, անձի պաշտպանության, կայսրության քրիստոնյա բնակչության սեփականության և պատվի ապահովության խոստումներն անկեղծ չէին և չպիտի իրականանային: Տիրակալները չէին կարող կյանքի կոչել այդ իրավունքները և, միաժամանակ, մնալ բարեխիղճ ու հավատարիմ մահմեդականներ: Մահմեդականության պատմությունը քրիստոնեական կրոնի դեմ մղվող անընդհատ պատերազմների պատմություն է, և հայերը կոտորվել ու ոչնչացվել են քրիստոնեական կրոնը ընդունելուց ի վեր: 1890-ական թվա-

կանոնների կոտորածներն իրենց բնույթով կրոնական էին, բայց սուլթանը այդքան միամիտ չէր, որ չափից դուրս բացահայտ պատերազմ մղեր իր քրիստոնյա հպատակների դեմ և արտաքին աշխարհի աչքերում իր մարտավարությունն արդարացնելու համար առաջ էր քաշում հեղափոխության փտանգի պատրվակը։ Բրիտանական և եվրոպական իշխանություններին ավելի նպատակահամար էր ծևանալ, թե իրենք հավատում են սուլթանի՝ հայերին ներկայացվող ապստամբության մեղադրանքներին, քան թե ընդունել, որ հայերը ոչնչացվում են միայն այն բանի համար, որ քրիստոնյա են»։¹²

Մինչդեռ այսօր մենք և ուրիշները (ես այստեղ առանձնացնում եմ Վահագն Դադրյանի և Ռիչարդ Հովհաննիսյանի կատարած կարևոր աշխատանքը) մեր կարծիքներով կարող ենք տարբերվել Լեմկինի՝ այլ կրոնների նկատմամբ Ղուրանի պատվիրանների և Հայոց ցեղասպանության արմատների ու բազմակողմանի պատճառների վերաբերյալ տեսակետներից։ Բացի այդ, կարծում ենք, որ Լեմկինի համար անժխտելի էր, որ Օսմանյան կառավարությունն իրենից քաղաքական-կրոնական համակարգ էր ներկայացնում և այդ պատճառով, «Օսմանյան կայսրությունում ոչ մի տեղ չկար քրիստոնեական հավատք ունեցող անձանց համար»։

Մրան գումարած, գոյություն ունեցող փաստերին ծանոթանալով, Լեմկինը քաջ գիտակցել էր Թուրքիայի դաշնակից Գերմանիայի՝ հայերի գրեթե ամբողջական ոչնչացման գործում ցույց տված աջակցությունը։

«Բարձր դուռը զգում էր՝ ունենալով Գերմանիայի աջակցությունը, կարող է համոզված լինել, որ իր իրականացրած զանգվածային սպանությունների պատճառով չի փտանգի ապագա փոխհարաբերությունները։ Այս համոզվածության հիմքում ընկած էր այն ենթադրությունը, որ Գերմանիան կհաղթի պատերազմը և կպաշտպանի Թուրքիային արևմտյան տերությունների և Ռուսաստանի վրեժխնդրությունից։

Հանցագործությունը մշակվել էր հետևողականորեն և ավելի քան հիստուն տարբեր տեղերից սպանության նույնանման եղանակներին վերաբերող փաստեր կան՝ ներառյալ բուն Հայաստանի բոլոր կարևոր քաղաքները և Արևելյան Անատոլիան, ինչպես նաև Իսմիլը և Բրուսան արևմուտքում և Տրափեայի մի շարք վայրերում»։¹⁴

Ներկայացված փաստերի հիման վրա մեղադրանք ներկայացնելով Թուրքիային հայերի ցեղասպանության համար, Լեմկինը մինչև գերմանացիներին մեղադրելը փորձում է աղերսներ գտնել հրեական Հոլոքոստի հետ։

«Համոզված կարելի է գուգահեռ անցկացնել թուրքերի կողմից հայերի և գերմանացիների կողմից հրեաների ոչնչացման միջև։ Հայերի դրությունը Օսմանյան կայսրությունում շատ նման էր հրեաների դրությանը Գերմանիայում։ Հայերը կայսրության աշխատասեր քաղաքացիներն էին, որոնց հատուկ էր արհեստների շնորհքը և մտավոր աշխատանքի ձգտումը։ Նրանք վաճառականությամբ զբաղվելու՝ հրեաների նույն ձիրքն ունեին և հայն էր Ասիական Թուրքիայում, որ հնուտ արհեստավոր էր և բանիմաց գործարար։ Անատոլիայի յուրաքանչյուր քաղաք իր բարգավաճ հայկական թաղամասն ուներ, որը ոչ միայն տեղական արհեստների, առևտրի, մտավորական կյանքի կենտրոնն էր, այլև Պոլսի ու Եվրոպայի հետ վաճառականական կապերի հիմնական հանգուցակետ»։¹⁵

Մատնանշելով այս կապերը՝ Լեմկինը դատապարտում է Գերմանիային Հայոց ցեղասպանության մեջ իր մեղսակցության համար:

«Բազմաթիվ փաստեր կան, որ հայերի ոչնչացման տեղեկությունները լիակատար հավանության են արժանացել Գերմանիայում: ...Եթե Գերմանիան ցանկություն ունենար, կարող էր կանգնեցնել բռնությունները՝ պարզապես իր աջակցությունը դադարեցնելու միջոցով...: Անհավանական է, որ Գերմանիայի իշխանությունները կարող էին ձեռնարկել հանցանքը, բայց ակնհայտ է, որ գերմանացիները ոչ մի քաղ չարեցին այն կանգնեցնելու համար: ...Վերոհիշյալ փաստերին ծանոթանալուց հետո կասկած չի մնում, որ ոչնչացման ծրագիրը լավ նախապատրաստված է եղել և դրվել է գործադրման թուրքական կառավարության կողմից Գերմանիայի լիակատար իմացությամբ և աջակցությամբ»:¹⁶

Չեռագիր N 2. Հայկական կոտորածների համառոտ ձեռագիր

Հայոց ցեղասպանությանն առնչվող այս կրճատ ձեռագիրը առանձնահատուկ չէ: Այն ներկայացնում է բռնությունների որոշ այլ օրինակներ, հղումներ տալիս տարբեր աղբյուրներից, չունի ոչ ներածություն, ոչ եզրակացություն, և ինչպես ասացին ձեռագրի դեպքում, բանականության որևէ հետք չի թողնում (and equally provides no rationale whatsoever for its writing): Այնուամենայնիվ, ձեռագիրն ավարտվում է հետևյալ մտքով. «Հայերի հերոսական գործողությունների անհամար պատմություններ կան, և սարսափելի աղետին դեմ առ դեմ նրանց ցուցաբերած տոկոսությունն արժանի է հիացմունքի»:¹⁸

Եզրակացություն

Լեհաստանից ԱՄՆ գաղթած հրեա, ցեղասպանություն բառի հեղինակ և 1948թ. «Ցեղասպանության հանցանքի կանխարգելման և դրա համար պատժի» Միացյալ ազգերի կազմակերպության կոմիտեից հայի ընդունման ոգեշնչող Ռաֆայել Լեմկինի մտածողության մեջ իր սեփական ժողովրդի Հոլոքոստի և բազմաթիվ մյուս ժողովուրդների դեմ իրականացված ցեղասպանական վայրագությունների հետ միասին Հայոց ցեղասպանությունը կենտրոնական տեղ էր զբաղեցնում: Այն փաստը, որ նա հատուկ այս ոլորտական իրադարձությունների մասին մեկի փոխարեն երկու ձեռագիր է գրել, բավականաչափ ապացույց է առ այն, որ աշխարհից այս տեսակ սարսափները վերացնելու իր սեփական երազանքների մեջ նա միշտ իր աչքի առաջ է ունեցել Հայոց ցեղասպանությունը: Նա ուղղակի պատճառական կապ տեսավ այն հանցանքների մեջ, որոնք նախ գերմանացի դաշնակիցների լիակատար իմացությամբ թուրքերն իրականացրեցին հայերի և ապա մացիստները՝ հրեաների նկատմամբ, և 1939թ. օգոստոսին Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին Հիտլերի «Ո՞վ է հիմա հիշում հայերի ոչնչացման մասին» հռետորական հարցին տվեց հաստատական պատասխան: Դա արվեց մի մարդու կողմից, որի բարոյական խիզախությունը և ազնվությունը մղեցին նրան խոսքերը փոխակերպել մարտահրավերների իսկ մարդկանց կործանումը՝ կանխարգելիչ ջանքերի:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ¹ Sh'u op'hmayk, Steven L. Jacobs. Raphael Lemkin's Thoughts on Nazi Genocide: Not Guilty? (Lewiston, NY: Edwin Mellen Press, 1992); "The Papers of Raphael Lemkin: A First Look", Journal of Genocide Research 1:1 (1999): 105-14; "Genesis of the Concept of Genocide According to Its Author from the Original Sources", Human Rights Review, forthcoming.
- ² Այստեղ ես որոշ չափով համաձայն չեմ Վահագն Դադրյանի հետևյալ մտքին. «Իրականում, փաստերը ցույց են տալիս, որ ցեղասպանություն հանցանքը միջազգային իրավունքի շրջանակների մեջ ներառելու նրա հետաքրքրությունը առաջին անգամ խթանվել է Հայոց ցեղասպանության սարսափների նկատմամբ ունեցած իր զգայական, ինչպես նաև իմտելիկտուալ փոխազդեցությամբ»: Sh'u Vahakn N. Dadrian. The key Elements in the Turkish Denial of the Armenian Genocide: A Case Study of Distortion and Falsification (Toronto: Zoryan Institute, 1999), p. 35: Ավելի շուտ, Լեմկինի անխոնջ մղումներում Հայոց ցեղասպանությունը որոշիչ գործոն էր ցեղասպանության հանցավոր գործողությունների պատիժը միջազգայնացնելու համար:
- ³ Այս դատավարությանը վերաբերող 70 հատոր նյութերում Լեմկինը վկայակոչվում է 8 անգամ: 4 անգամ՝ «Միջազգային ռազմական տրիբունալի» 42 հատորներում, երկու անգամ՝ «Նացիստական դատավարությունը և ազդեցիկ» 11 հատորականում և երկու անգամ՝ «Նյուրնբերգի ռազմական տրիբունալի» 16 հատորներում: Sh'u Lames Joseph Sanchez, James Joseph, Kelly Reed, Brian Peck, Valerie Caquias, and Vickey Bishop, co-compilers, Nuremberg War Crimes Trials (Seattle: Aristarchus International Law Database Series, 1995), CD-Rom.
- ⁴ Raphael Lemkin. Axis Rule in Occupied Europe: Laws of Occupation, Analysis of Government, Proposals for Redress (Washington, DC: Carnegie Endowment for International Peace, 1944), 674 pages.
- ⁵ Ibid., p. 79n1.
- ⁶ Լեմկինի մահից համարյա երեք տասնամյակ անց, 1988թ. Միացյալ Նահանգները վերջապես ընդունեց Ցեղասպանության կոնվենցիան, ինչը տեղի ունեցավ պահպանողական նախագահ Ռոնալդ Ռեյգանի և Վիկտորիայի ներկայացնող կոնվենցիայի անխոնջ պաշտպան սենատոր Վիլիամ Պրոքսմայրի զգալի աջակցության շնորհիվ: Կոնվենցիայի վավերացման հետ կապված քաղաքական մանյովրերի մանրամասն քննարկումների համար տե՛ս Lawrence J. LeBlanc. The United States and the Genocide Convention (Durham, NC: Duke University Press, 1991):
- ⁷ Դրանք հետևյալ ձեռագրերն են. "Totally Unofficial: The Autobiography of Raphael Lemkin"; "Introduction to the Study of Genocide"; "The Hitler Case"; "A History of Genocide in Three Volumes": Որպես նրա 20000 էջերից ավելի ճամակագրությունների, հոդվածների, հարցազրույցների, խմբագրականների, լրագրային քաղվածքների և ձեռագրերի խմբագիր, ես մտադիր եմ նախ համակարգել և ցուցակագրել այս բոլոր նյութերը և այնուհետև՝ հետամուտ լինել դրանցից կարևորների հրատարակմանը մեկ դրոշմագրի ներքո, նաև ջանալ տպագրել նրա համառոտ գործերի ժողովածուն, ինչպես նաև տալ այդ մարդու և նրա գործերի քննական գնահատականը: Նրա աշխատանքների ավելի հանգամանալից քննության համար տե՛ս իմ ուսումնասիրությունը. «The Papers of Raphael Lemkin: A First Look».
- ⁸ Ի լրումն այս առանձին ձեռագրի, Հայոց ցեղասպանությանը վերաբերող մեկ գլուխ պետք է ընդգրկվեր նրա երեք հատորանոց «Ցեղասպանության պատմություն» գրքում, մասնավորապես 3-րդ՝ «Ներկա ժամանակներ» հատորում: Այնուամենայնիվ, դա տեղի չունեցավ, ինչը թույլ է տալիս կարծել, որ Լեմկինն արդեն մահացել էր, մինչև կկարողանար գրել այն:

- ⁹ Սիսա ալդ աղբյուրները, որոնց ցուցակը կազմել է ինքը՝ Լեմկինը.
 Մատենագիտություն հայկական կոտորածների վերաբերյալ
 The Tragedy of Armenia, Henry Morgenthau, London, 1918
 Great Britain, Miscellaneous No. 31(1916), The Treatment of Armenians [in the
 Ottoman Empire], Preface by Viscount Bryce.
 Armenia, a Martyr Nation, M. C. Gabrielian, London, 1918.
 Turkey and the Armenian Atrocities, Rev. Edwin Munsell Bliss, 1896.
 The Armenian Crisis in Turkey, Frederick Davis Greene, 1895.
 Turkish Cruelties upon the Armenian Christians, Rev. Edwin Munsell Bliss, 1896.
 Les Turcs ont passé la', George Brezol, Paris, 1911.
 Horrors of Armenia, William Hillard Howard, New York, 1896.
 Shall this Nation Die? Rev. Joseph Naayem, New York, 1921.
 The Blackest Page of Modern History, Herbert Adams Gibbons, New York, 1916.
 Massacres d'Arménie, Pierre Loti, 1919.
 Beginning Again at Ararat, Mabel Evelyn Elliott, 1924.
 Hadjin and the Armenian Massacres, Rose Lambert, 1911.
 Germany, Turkey and Armenia, London, 1917 – A selection of documentary
 evidence relating to the Armenian atrocities from German and other sources.
 Letters on Turkey, [Abdolonyme] Ubricini, Vol. II.
 Nineveh, [Austen Henry] Layard, Vol. I.
 Armenia and the Campaign of 1877, [Charles Boswell] Norman.
 Annual Cyclopedica, Appelton [publisher], 1880.
 The Armenian Crisis in Turkey, [Frances D.] Greene.
 Armenia and Europe, [Johannes] Lepsius, Berlin, 1896.
 Transcaucasia and Ararat, [Japes] Bryce, 4th edition.
 Fifty Years in Constantinople, [George] Washburn.
- ¹⁰ Տի'ու Ռաֆաել Լեմկին. "Book-Lenght Manuscript on the Armenian Massacres", pp.
 32-33: Բնագրի համար տի'ու Frederick Davis Greene, The Armenian Crisis in
 Turkey (New York: G. P. Putnam's Sons), pp. 13-15.
- ¹¹ "Book-Lenght Manuscript", p. 85.
- ¹² Ibid., p. 87.
- ¹³ Ibid., pp. 89-90.
- ¹⁴ Ibid., p. 92.
- ¹⁵ Ibid., p. 93.
- ¹⁶ Ibid., pp. 95ff.
- ¹⁷ Դրանք տողատակերում նշված Լեմկինի հետևյալ աղբյուրներն են.
 1. Sonnenaufgang, October, 1915; 2. Germany, Turkey and Armenia; New York
 Journal, Gotchnag, August 28, 1915; 4. Treatment of Armenians; 5. Beginning Again
 at Ararat.
- ¹⁸ "Short Manuscript", p. 6.
- ¹⁹ Գ. Բարդաքյանի պարզաբանումները և վերլուծությունը կոզենե հասկանալ, քե
 ի՞նչ համատեքստում է Հիտլերը տվել այս մտադրված և ինքն իրեն արդարաց-
 նող հարցը: Kevork B. Bardakjian. Hitler and the Armenian Genocide (Cambridge,
 MA: Zoryan Institute, 1985).